



# ԲԱԼԱՇՄԱԿԱԳ

Փ. ՏԱՐԻ ԹԻՒ 12.

1851

ՅՈՒՆԻՑԻ 15.

## ԲԱՐՈՅԵԱԿԱՆ

ՅԱՂԱԳԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՊԱՐՏՈՒՅ

ԳԼՈՒԽ ԻԵ.

Հարստութիւն :

ԱՐԱՏՔՆ ալ փիլիսոփայութիւնն  
ալ կը գովեն աղքատութիւնը՝ երբոր ա-  
ռաքինական է, և շատ աւելի վեր կը  
գնեն այնպիսի աղքատութիւնը քան թէ  
հարստութեան անհանգարտ սէրը : Իշ-  
սակայն ասոր ալ կը հաւանին թէ մար-  
դըս կրնայ թէ հարուստ ըլլալ և թէ  
այնպիսի պատուական աղքատներուն  
հաւասար աղէկութիւն ունենալ :

Ի՞ս բանիս համար ուրիշ բանի կա-  
րօս չէ այնպիսին՝ բայց եթէ ասոր, որ  
իր հարստութեանը գերի ըըլլայ . ստա-  
կը գէշի բանեցընելու համար ոչ ժողվէ  
և ոչ պահէ, այլ մանաւանդ աս միայն  
ուզէ որ ստակը իրեն նման մարդկանց  
օգուտ ընելու բանեցընէ :

Ո՞րդուս ամէն պատուաւոր վիճակ-  
ներն ալ օրհնած են, ուստի նաև չա-  
րստութիւնն ալ . — բաւական է որ  
հարուստները իրենց յաջողութիւնը  
ուրիշ շատ մարդկանց բարիք ընելու  
գործածեն . բաւական է որ հանգըս-  
տութիւնն ու ճոխութիւնը ծուլու-  
թեան ու հպարտութեան պատճառ  
ըլլայ իրենց :

Դուն՝ հաւանական է որ աս վիճա-  
կիդ մէջ մնաս՝ որուն մէջ որ ծներ ես,  
թէ մեծ հարստութենէ հեռու և թէ  
աղքատութենէ : Կայէ որ ոչ երբէք  
տեղիք գտնէ քու վրադ այն ցած ատե-  
լութիւնն, որ շատ անգամ հարուստ  
շեղողներուն ու աղքատներուն սիրտը

կը կրծէ հարուստներուն դէմ։ Ի՞սիկայ այնպիսի ատելութիւն մըն է որ սովորաբար փիլիսոփայական լեզուին ծանրութիւնը կ'առնէ . տաք տաք բացագանչութիւններ կ'ընէ զեղիսութեան դէմ, այլ և այլ վիճակներուն իրարուխիստ անհաւասար ըլլալուն անիրաւութեանը դէմ, հարուստ մեծամեծներուն գոռողութեանը դէմ։ և սաստիկ փափաք մը կը ցուցընէ (ըստ երեսութիւն վեհանձնական փափաք) որ ամէնքը հաւասար ըլլային, և մարդկանց այնչափ խեղջութիւններուն թեթեսութիւն մը ըլլար։ Ի՞ս բաներուս ամենեին մէկն ալ զքեզ չխաբէ, թէպէտ և յանկարծ նոյն բանը քանի մը անուանի մարդկանց բերնէն ալ լսես, և հարիւրաւոր Ճարտասան իմաստակներու գրրուածքներուն մէջ կարդաս, որ հասարակ ժողովուրդը շողոքորթելով՝ անոր գովեստները գնելու կ'աշխատին։ Ի՞նպիսի բարկութեանց մէջ աւելի նախանձ տղիտութիւն ու զրպարտութիւն կայ՝ քան թէ արդարութեան սէր։

Ի՞աղդի անհաւասարութիւններուն ճար չկայ. և անոնցմէ չարիք ալկ'ելէ՛ բարիք ալ։ Ի՞ն մարդն որ այնչափ անէծքներ կու տայ հարուստին, ձեռքէն գար նէ սիրով անոր տեղը կ'անցնէր. ուրեմն թող հարստութեան մէջ զըտնուողն ալ իր տեղը հաստատ կենայ։ Խիստ քիչ հարուստ կայ որ ունեցած ստակը չըանեցընէ. և ան բանեցընելով՝ ամէնքն ալ հազարումէկ կերպով, աւելի կամ պակաս արժանաւորութեամք, երբեմն ալ առանց արժանաւորութեան, հասարակաց բարոյն գործակից կ'ըլլան։ Հոգի կու տան վաճառականութեան, ախորժակաց կրթուելուն, արուեստից մէկմէկէ աւելի ծաղկելուն, աղքատութեան ձեռքէն Ճարտարութեամք փախչել ուզողին անհամար յոյսերուն։

Ճարուստ ըսելէն ետքը, դատարկ' մեղկ' անօգուտ մարդիկ միայն հասկընալը, անխելք դիզաբանութիւնէ։ Ոյէ որ ոսկին ոմանց ծուլութեան պատճառ կ'ըլլայ նէ, ուրիշներուն ալ այլ և այլ

բարեգործութեան յորդոր կ'ըլլայ։ Ո՞էկ ծաղկած քաղաք մը չկայ աշխարհիս երեմն որ մէջը հարուստները հասարակաց օգտին համար շենքեր հիմնած և առաջ երթալուն պատճառ չըլլան. տեղ մը չկայ որ մէջը կամ ընկերութիւններով և կամ շատ շատ աղքատներուն օգնութիւն ընողներ չի գըտնուին։

Ուրեմն հարուստներուն վրայ առանց բարկութեան և առանց նախանձունայէ, ու ռամիկ մարդկանց ըրած զըրպարտութիւնները բերանդ մի առնուր։ Կայէ որ ոչ արհամարհէն զանոնք, և ոչ վատ ըլլաս առջևնին, ինչպէս որ չեսուզելու որ քեզմէ քիչ հարուստ եղողը արհամարհու կամ վատ ըլլայ քու առջեղ։

Փէ՛ւլիքոՅ

#### ՆԿԱՐԱԳՒՐ

#### Ի՞նհամբէր նար :

Ի՞նչ ԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ կ'ըսուի ան սրտնեղութիւնը՝ որ կամ խօսքով կամ գործքով մը կը ցուցընենք մէկ բանէ մը ձանձրանախուս կամ նեղանախուս։ Ինչպէս մէկը բանի մը զբաղած ատենը՝ չախորժած անձինքներէն մէկը վրայ գալու որ ըլլայ, կը սկսի նեղիլ, ոտքը գետինը զարնել, ուսկից եր տնկուեցաւ ըսել. ինչպէս թէ որ գրելու ատենը մէկու մը զրչին ծայրը մազ մը գալու որ ըլլայ, կամ թանաքը թղթին վրայ կաթելու ըլլայ՝ գրիչը գետինը կը զարնէ, կը սկսի գրիչը անարգել. ինչպէս մէկը թուղթ խաղալու ատեն խաղը կորսընցընելով՝ կիրքէն թղթերը կը պատրուտէ։ Ի՞սոր նման սրտնեղութիւնները որ բարկութեան աստիճան չեն հասնիր, ու կատարեալ բարկութիւն չեն կրնար ըսուիլ, բողոքն ալ անհամբերութեան գործքեր են։

Խելք հասնելու պակասութիւններուն մէկն ալ այս է. անհամբերը փոր.